Կ-1176-27.10.2025-ՏՏԳԾ-011

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-140-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածում՝

1) 1.1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1.1. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և վաճառքը օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են: Պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրության և վաճառքի լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևերը հաստատում է Կառավարությունը: Լիազոր մարմինն իրականացնում է պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրության և վաճառքի լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ մաս.

«1.2.Քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից սահմանվում են պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրեր և կանոններ՝ նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների համար:»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում «լիազոր մարմինն» բառերը փոխարինել «քաղաքականություն մշակող լիազոր մարմինն» բառերով:

Հոդված 3. Օրենքի 6-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ 6

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄՆ ՈՒ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Հոդված 18. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումն ու ոչնչացումը

1. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների Հայաստանի Հանրապետություն ներմուծման կամ տեղափոխման ժամանակ կարանտին վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու դեպքում դրանց մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխարգելելու, ինչպես նաև սույն Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում կարանտին վնասակար օրգանիզմների տարածումն ու վարակի օջախները վերացնելու նպատակով կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանման ժամանակ ներմուծող երկրի պահանջներին համապատասխան կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանման ժամանակ բուսասանիտարական փորձաքննության արդյունքում կարանտին վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու դեպքում՝ լիազոր մարմնի պաշտոնատար անձի (տեսուչի) տրամադրած եզրակացության հիման վրա, սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ վարակված բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքները վարակազերծվում, ոչնչացվում կամ վերադարձվում են արտահանող երկիր:

2. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումն օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է: Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծման գործունեությամբ զբաղվելու լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատում է Կառավարությունը:

3. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծման մեթոդները, մեթոդներին ներկայացվող ընդհանուր պահանջները, վարակազերծման, ոչնչացման և վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումը, ոչնչացումը կամ վերադարձն իրականացվում է սեփականատիրոջ միջոցների հաշվին: Եթե վարակազերծման կամ ոչնչացան ենթակա բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքի սեփականատերը հրաժարվում է կատարել դրանց վարակազերծումը կամ ոչնչացումը կամ այն հնարավոր չէ կատարել անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով, ապա լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա Հայաստանի Հանրապետություն ներմուծվող կամ տեղափոխվող բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների տվյալ խմբաքանակը հետ է վերադարձվում արտահանող երկիր, իսկ Հայաստանի Հանրապետությունից արտահանման դեպքում՝ մերժվում է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքով սահմանված արտահանման կամ վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրի տրամադրումը:

5. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումն իրականացվում է վարակազերծման աշխատանքներ իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից: Եթե վարակազերծված արտադրանքում երկուսից ավելի անգամ կարանտին վնասակար օրգանիզմ է հայտնաբերվում, ապա այն հիմք է հանդիսանում վարակազերծման աշխատանքներ իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար: Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ոչնչացումն իրականացվում է ոչնչացման ծառայություններ մատուցելու լիազորություն ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից:

6. Լիազոր մարմինն իրականացնում է բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծում իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Օրենքի 10-րդ հոդվածում լրացվող 1.2-րդ մասի և 2-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բուսասանիտարիայի մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-140-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածում՝

1) 1 .1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1 .1 . Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և վաճառքը օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներ են: Պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրության և վաճառքի լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևերը հաստատում է Կառավարությունը: Լիազոր մարմինն իրականացնում է պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրության և վաճառքի լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն:» .

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.2-րդ մաս.

«1.2. Քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից սահմանվում են պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրեր և կանոններ՝ նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների համար:»:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասում «լիազոր մարմինն» բառերը փոխարինել «քաղաքականություն մշակող լիազոր մարմինն» բառերով:

Հոդված 3. Օրենքի 6-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«**ԳԼՈՒԽ 6**

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄՆ ՈՒ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Հոդված 18. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումն ու ոչնչացումը

1. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների Հայաստանի Հանրապետություն ներմուծման կամ տեղափոխման ժամանակ կարանտին վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու դեպքում դրանց մուտքը Հայաստանի Հանրապետություն կանխարգելելու, ինչպես նաև սույն Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքում կարանտին վնասակար օրգանիզմների տարածումն ու վարակի օջախները վերացնելու նպատակով կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանման ժամանակ ներմուծող երկրի պահանջներին համապատասխան կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանման ժամանակ բուսասանիտարական փորձաքննության արդյունքում կարանտին վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու դեպքում՝ լիազոր մարմնի պաշտոնատար անձի (տեսուչի) տրամադրած եզրակացության հիման վրա, սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ վարակված բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքները վարակազերծվում, ոչնչացվում կամ վերադարձվում են արտահանող երկիր:

2. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումն օրենքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ է: Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծման գործունեությամբ զբաղվելու լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատում է Կառավարությունը:

3. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծման մեթոդները, մեթոդներին ներկայացվող ընդհանուր պահանջները, վարակազերծման~~և~~, ոչնչացման և վերադարձման կարգը սահմանում է Կառավարությունը:

4. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումը, ոչնչացումը կամ վերադարձն իրականացվում է սեփականատիրոջ միջոցների հաշվին: Եթե վարակազերծման կամ ոչնչացան ենթակա բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքի սեփականատերը հրաժարվում է կատարել դրանց վարակազերծումը կամ ոչնչացումը կամ այն հնարավոր չէ կատարել անհրաժեշտ պայմանների բացակայության պատճառով, ապա լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա Հայաստանի Հանրապետություն ներմուծվող կամ տեղափոխվող բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների տվյալ խմբաքանակը հետ է վերադարձվում արտահանող երկիր, իսկ Հայաստանի Հանրապետությունից արտահանման դեպքում՝ մերժվում է «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» օրենքով սահմանված արտահանման կամ վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրի տրամադրումը:

5. Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծումն իրականացվում է վարակազերծման աշխատանքներ իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից: Եթե վարակազերծված արտադրանքում երկուսից ավելի անգամ կարանտին վնասակար օրգանիզմ է հայտնաբերվում, ապա այն հիմք է հանդիսանում վարակազերծման աշխատանքներ իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար: Բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ոչնչացումն իրականացվում

է ոչնչացման ծառայություններ մատուցելու լիազորություն ունեցող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից:

6. Լիազոր մարմինն իրականացնում է բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վարակազերծում իրականացնելու համար լիցենզավորված իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից լիցենզիայի պայմանների ու պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն:»:

Հոդված 4.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակումից 8 ամիս հետո~~2027 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ սույն օրենքի 1-ին հոդվածի ~~2-րդ~~ 1-ին մասի 2-րդ կետով Օրենքի 10-րդ հոդվածում լրացվող 1.2-րդ մասի և 2-րդ հոդվածի, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6 ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (*Կ-1176-27.10.2025-ՏՏԳԾ-011/1)*

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

N	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկությանն վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Կ-1176-27.10.2025-ՏՏԳԾ-011/1)					

1	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասում «ոչնչացման» բառից հետո ավելացնել «վերադարձման» բառը՝ հաշվի առնելով նույն հոդվածի 1-ին մասի կարգավորումը. դիտարկվել է նաև բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների վերադարձի կարգի նախատեսում:	Ընդունվել է:	Ընդունվել է:
	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «1-ին հոդվածի 2-րդ մասի» բառերը փոխարինել «1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով Օրենքի 10-րդ հոդվածում լրացվող 1.2-րդ մասի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2	Կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 8 ամիս հետո» բառերը փոխարինել «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից» բառերով, քանի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			որ նախագծով նախատեսվում են գյուղատնտեսության և բուսասանիտարիայի բնագավառում լիցենզավորման ենթակա նոր գործունեության տեսակներ, որոնցով զբաղվելու համար սահմանվում են նոր պետական տուրքեր: Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է. «Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբից»: Հետևաբար, Նախագծի ուժի մեջ		

			մտնելու հնարավոր ամենավաղ ժամկետը 2027 թվականի հարկային տարվա սկիզբն է:		
«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Կ-1176³-27.10.2025-ՏՏԳԾ-011/1)					
1	Կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից», քանի որ նախագծի 1-ին հոդվածով նախատեսվում է «Պետական տուրքի մասին» օրենքի 19-րդ հոդվածում լրացնել նոր՝ 6.1-ին բաժին եւ նոր՝ 18.18.1-18.18.4-րդ ենթակետեր, որոնցով գյուղատնտեսության և բուսասանիտարիայի բնագավառում որոշ գործունեության տեսակներով զբաղվելու համար սահմանվում են նոր պետական տուրքեր, իսկ ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ նաեւ՝ Օրենսգիրք) 2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Օրենսգրքով նոր տեսակի հարկի կամ վճարի սահմանում, հարկի կամ Օրենսգրքով	Ընդունվել է:	Ընդունվել է:

			սահմանված վճարի դրույքաչափի բարձրացում նախատեսող Հայաստանի Հանրապետության օրենքները կամ Հայաստանի Հանրապետության օրենքների նման դրույթները կարող են ուժի մեջ մտնել այդ օրենքների ընդունման օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա սկզբից, բայց ոչ շուտ, քան այդ օրենքների պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող յոթերորդ ամսվա սկզբի»: Հետևաբար, Նախագծի ուժի մեջ մտնելու հնարավոր ամենավաղ ժամկետը 2027 թվականի հարկային տարվա սկիզբն է:		
«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Կ-1176[1]-27.10.2025-ՏՏԳԾ-011/1)					
1	Կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով «Լիցենզավորման մասին» օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակում լրացվող նոր 7.1-ին բաժինը նախատեսել չակերտների մեջ՝ պաշտոնական ինկորպորացման ժամանակ խնդիրներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է:	Ընդունվել է:

	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից»: Փոփոխությունը պայմանավորված է փաթեթում ներառված օրենքների նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետները համապատասխանեցնելու հետ:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (Կ-1176[2]-27.10.2025-ՏՏԳԾ-011/1)					
1	Կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝ «1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից»: Փոփոխությունը պայմանավորված է փաթեթում ներառված օրենքների նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետները համապատասխանեցնելու հետ:	Ընդունվել է:	Ընդունվել է: